

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



### Ոլորտն ունի զարգացման լայն հեռանկարներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ֆրանսիայի գինեգործության ոլորտի ներկայացուցիչներին՝ Հայաստանում խաղողագործության և գինեգործության ներկա վիճակի քննարկման և այդ ուղղությամբ համագործակցության հնարավոր հեռանկարները նախանշելու նպատակով: «Ֆրանսիան ունի հարուստ փորձ խաղողագործության և գինեգործության ոլորտներում, և այս ուղղությամբ ֆրանսիացի մասնագետների հետ ակնկալում ենք արդյունավետ ու փոխշահավետ համագործակցություն», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Միաժամանակ նախարարն ընդգծել է, որ այս ոլորտների զարգացումն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը: Այս կապակցությամբ, Սերգո Կարապետյանն ընդգծել է Հայաստանում հայ-ֆրանսիական համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը՝ վերամշակված արտադրանքը հետագայում ԵՏՄ երկրներ արտահանելու և այնտեղ իրացնելու հեռանկարով:

Նշելով, որ միջազգային, այդ թվում՝ ռուսաստանյան շուկայում մեծ պահանջարկ ունի նաև հայկական կաթնամթերքը, նախարարը կարևորել է համագործակցության զարգացումը պանրագործության ոլորտում:

Տեղեկացնելով, որ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ Հայաստանում ստեղծվելու է տեղական սորտերի վերականգնման և պահպանման այգի, նախարարը հույս է հայտնել, որ այս կարևոր նախաձեռնությունը ևս կհետաքրքրի ֆրանսիացի մասնագետներին:

Է 2

### Կիրականացվեն քայլեր՝ համագործակցությունն ամրապնդելու համար

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիային:

Շնորհավորելով հյուրին Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ստանձնելու կապակցությամբ՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ հայ-արգենտինական հարաբերությունները նրա պաշտոնավարման ընթացքում էլ ավելի կխորանան: «Հայաստանի և Արգենտինայի միջև, հատկապես գյուղատնտեսության բնագավառում, այս տարիներին ձևավորվել են փոխշահավետ հարաբերություններ: Սակայն երկու երկրների միջև առկա է նաև փոխգործակցության չիրացված ներուժ, որի արդյունավետ օգտագործման դեպքում կարելի է հասնել առավել տպավորիչ հաջողությունների», - նշել է նախարարը:

Հանգամանորեն ներկայացնելով դեսպանին Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակը, վերջին տարիների ձեռքբերումներն ու արդյունքները՝ նախարարը վստահություն է հայտնել, որ Հայաստանի և Արգենտինայի միջև առկա են համագործակցության լայն հնարավորություններ, մասնավորապես՝ անասնապահության և վերամշակման ոլորտներում:

Իր խոսքում նախարարն ընդգծել է գյուղատնտեսության բնագավառի հետագա զարգացման համար ներդրումների իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ գյուղմթերքի արտադրության և արտահանման ծավալների ավելացման նպատակով, համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը: Նախարարը հնարավոր է համարել նաև համատեղ անասնապահական ֆերմաների հիմնադրումը՝ վերամշակված արտադրանքը հետագայում Եվրասիական տնտեսական միություն արտահանելու հեռանկարով: Դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիան, գոհունակություն հայտնելով գյուղատնտեսության ոլորտում ձևավորված հայ-արգենտինական համագործակցության բարձր մակարդակով, վստահեցրել է, որ կներդնի առավելագույն ջանքեր՝ այս ուղղությամբ փոխգործակցությունը խորացնելու նպատակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև առաջիկայում, երկկողմ համագործակցության շրջանակում, հայ փորձագետների Արգենտինա կատարելիք այցին առնչվող հարցեր:

## ԴՊՇՏՈՆԱԿԱՆ

### Ջերմատնային համալիրներն ուշադրության կենտրոնում են

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնել է Կոտայքի մարզ: Հանրապետության նախագահը, Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանի ուղեկցությամբ, այցելել է մարզի Գողթ համայնքում գտնվող «Էկոտոմատո» ՓԲԸ վարդերի ջերմատնային համալիր, ծանոթացել վերջին շրջանում ընկերության կողմից արտադրական ծավալների ընդլայնման ուղղությամբ իրականացված աշխատանքներին, ներդրումային ու զարգացման ծրագրերին, ստեղծված աշխատատեղերին և ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված արտադրական գործընթացին:

Նախագահին ներկայացրել են, որ ներկայումս «Էկոտոմատո» ՓԲԸ կառավարման ներքո է գտնվում 8 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային համալիր, որի կառուցման համար ներդրվել է շուրջ 7.7 մլրդ դրամ, ստեղծվել է շուրջ 120 աշխատատեղ՝ 140 հազար դրամ միջին աշխատավարձով: Համալիրում աճեցվում են 24 տեսակի հոլանդական վարդեր, արտադրանքի 70-80 %-ն արտահանվում է ՌԴ, Բելառուսի Հանրապետություն, Վրաստան, 20-30 %-ը՝ սպառվում է ներքին շուկայում: Ընկերության պատասխանատուների հավաստմամբ, 2015թ. առաջին 4 ամիսների տվյալների հիման վրա, «Էկոտոմատո» ՓԲԸ-ն կանխատեսում է տարեկան արտադրական ծավալները հասցնել 10-13 մլն հատ ծաղկի:

Է 2

### ՀՀ կառավարությունում

\*\*\* Կառավարությունում Հովիկ Աբրահամյանն անդրադարձել է գյուղատնտեսության վարկավորման սուբսիդավորմանը: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի քննարկած ծրագրի՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը և մի քանի այլ բանկեր գյուղատնտեսությամբ զբաղվողներին 14 տոկոսով վարկեր էին տրամադրում, որի 6 տոկոսը սուբսիդավորում էր ՀՀ կառավարությունը: Վարկը գյուղացուն էր հասնում 8 տոկոսով, ինչը մատչելի վարկային ռեսուրս է: Եվ քանի որ այժմ Կենտրոնական բանկը ռեսուրսի պակաս ունի, վարչապետը երեկ հարցը քննարկել է ՀՀ նախագահի հետ: Որոշվել է պետությունից՝ 2015թ. ընթացքում, 10 մլրդ դրամ հատկացնել Կենտրոնական բանկին, որն, իր հերթին, գումար կտրամադրի այդ ծրագրով զբաղվող բանկերին: Կառավարությունը դարձյալ կսուբսիդավորի տոկոսադրույքը՝ ապահովելով, որ գյուղացին վարկը ստանա 8 տոկոսով: Երեք միլիարդ դրամը կհատկացվի արդեն այս ամիս, իսկ յոթ միլիարդը՝ մինչև տարեվերջ:

\*\*\* ՀՀ կառավարությունը որոշել է Արմավիրի մարզի Բագարան համայնքում չորս հակակարկտային կայանքի ձեռքբերման և տեղակայման համար Արմավիրի մարզպետարանին հատկացնել 16 մլն դրամ: Մարզի գյուղատնտեսությունն ամեն տարի զգալի վնաս է կրում կարկտի պատճառով:

\*\*\* ՀՀ կառավարությունն ընդունել է Սյունիքի մարզի՝ Արծվանքի, Սևաքարի, Աճանանի, Չափնիի և Սյունիքի համայնքների վարչական սահմանների որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ, իսկ իր նախկին որոշումներից մեկը՝ ուժը կորցրած ճանաչելու որոշում: Դրանով կկարգավորվեն ոչ միայն այդ համայնքների, այլև համապետական կարևոր նշանակություն ունեցող Զաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողօգտագործման խնդիրները:

Վերադարձ ավանդույթների	Էջ 4
Գյուղատնտեսական ապահովագրությանն ընդառաջ	Էջ 5
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ջերմատնային համալիրներն ուշադրության կենտրոնում են

Նախագահն այցելել է նաև Լույս համայնքում գտնվող «Արմյանսկի Ուրաժայ» ՍՊԸ-ի վարունգի աճեցման ջերմատնային տնտեսություն, որտեղ ներկա է գտնվել ջերմոցային տնտեսության բացման արարողությունը: Այստեղ հանրապետության նախագահին տեղեկացրել են, որ 2014թ. փետրվարին հիմնված «Արմյանսկի Ուրաժայ» ՍՊԸ-ի կողմից մինչ այժմ կատարվել է մոտ 10 մլրդ ՀՀ դրամի ներդրում, նորագույն տեխնոլոգիաներով կառուցվել է 10.5 հա ընդհանուր մակերեսով ջեր-



մոցային համալիր, որտեղ ստանում են Էկոլոգիապես մաքուր և անվտանգ մթերք: 2015թ. ապրիլի 30-ի դրությամբ, ընկերությունն արտահանել է շուրջ 1.300 տ արտադրանք, որն իրացվել է հիմնականում ՌԴ-ում և Վրաստանում: Այժմ ընկերությունն ունի մոտ 280 աշխատակից՝ շուրջ 125 հազար դրամ միջին աշխատավարձով:

Հանրապետության նախագահն այնուհետև այցելել է մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող «Պրոգրես Ագրո» ՍՊԸ վարունգի աճեցման ջերմատնային տնտեսություն, որտեղ շուրջ 50 հա հողատարածքի վրա նախաձեռնվել է ջերմոցային համալիրի հիմնում: Սերժ Սարգսյանը ծանոթացել է իրականացված աշխատանքներին և ընկերության առաջիկա ծրագրերին: Նախագահին ներկայացրել են, որ շահագործման հանձնված 4.36 հա ջերմատնային այս տնտեսությունը ևս կառուցվել է նորագույն տեխնոլոգիաներով: Ջերմատն կառուցման նպատակով ներդրվել է շուրջ 7 մլն ԱՄՆ դոլար: Ընկերությունն ունի շուրջ 70 աշխատակից՝ 135 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով: Պատասխանատուների հավաստմամբ, ընկերությունը նախատեսում է մինչև տարեվերջ գործարկել ևս 16 հա մակերեսով ջերմատնային լոքերներ, որի արդյունքում կստեղծվեն հավելյալ շուրջ 200 աշխատատեղեր: «Պրոգրես Ագրո»-ն ծրագրում է առաջիկա տարիներին ընդլայնել ջերմոցային տնտեսությունը: Այցի ընթացքում, գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուները նախագահին զեկուցել են նաև Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների ընդհանուր վիճակի, զարգացման միտումների և դրան նպաստող պետական քաղաքականության իրականացման ընթացքի մասին:

ԳԻՏԱՐԿՈՒՄ

Կարկտահարություն հանրապետության մի քանի մարզերում

Ս.թ. մայիսի 15-ին Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի և Արարատի մարզերի մի քանի համայնքներում տեղացած կարկուտի նախնական վնասները հաշվարկելու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հանձնարարությամբ, նախարարության ներկայացուցիչները մեկնել են համայնքներ և համայնքների ղեկավարների, մարզպետարանների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ տեղում իրականացրել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

Ուսումնասիրությունների արդյունքում, պարզվել է, որ Արմավիրի մարզի՝ Արգինա, Զարակերտ, Շենիկ, Արտամետ, Բաղրամյան, Կողբավան, Հուշակերտ, Արագածոտնի մարզի Արագածավան և Արտենի, Վայոց ձորի՝ Ռինո, Աղավաձոր և Զիվա, Արարատի մարզի հիմնականում Կանաչուտ և Այգեստան համայնքներում տուժել են շուրջ 1454 հեկտար տարածքներ, այդ թվում՝ շուրջ 1059 հեկտար պտղատու այգիներ և 395 հեկտար խաղողի այգիներ: Նշված մարզերում տուժած 1059 հեկտար պտղատու այգիներից վնասը կազմում է շուրջ 3700 տոննա, իսկ խաղողի այգիներից՝ 1650 տոննա: Ընդհանուր գումարային արտահայտությամբ՝ վնասի նախնական չափը կազմել է շուրջ 1 մլրդ 142 մլն դրամ, որից՝ 836 մլն դրամը՝ պտղատու այգիներից, իսկ շուրջ 306 մլն դրամը՝ խաղողի այգիներից: Մասնավորապես, Արմավիրի մարզի թվով 7 համայնքներում տուժած պտղատու այգիների տարածքը կազմում է շուրջ 539.5, իսկ խաղողի այգիներինը՝ 122 հեկտար: Ընդ որում, պտղատու և խաղողի այգիների բերքի կորուստը կազմում է 20-90%: Արագածոտնի մարզի երկու համայնքներում տուժել են 329 հեկտար պտղատու այգիներ (վնասը՝ մոտ 20-60%) և 50 հեկտար խաղողի այգիներ (30-60%): Վայոց ձորի 3 համայնքներում տուժել են շուրջ 190.4 հեկտար պտղատու այգիներ (30-75%) և շուրջ 223 հեկտար խաղողի այգիներ (50-75%):

Դիտարկումները ցույց են տվել, որ մայիսի 15-ի կարկտահարության հետևանքով պատճառված վնասների չափերը էական ազդեցություն չեն ունենա 2015 թվականի համար կանխատեսվող պտղի և խաղողի արտադրության ծավալների վրա:

Տարեկան հանրապետությունում, կարկտահարությունների արդյունքում, տարբեր աստիճանի վնասներ են կրում 150-200 համայնքներ, սակայն, վերջին տարիներին, Կառավարության միջոցներով տեղադրված հակակարկտային կայանների տեղադրմամբ, մեղմվել են հասցվող վնասի չափերը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ոլորտն ունի զարգացման լայն հեռանկարներ

Հանդիպման ընթացքում պատվիրակության անդամները նշել են, որ այցի ընթացքում, ծանոթանալով հայ գինեգործության ավանդույթներին, համոզվել են, որ ՀՀ-ում այս ոլորտն ունի զարգացման լայն հեռանկարներ: Որպես խաղողագործության և գինեգործության բնագավառներում փոխգործակցության ընդհանուր եզրեր՝ ֆրանսիացի փորձագետները մատնանշել են, մասնավորապես, ֆրանսիական ընկերությունների հետ համատեղ, փորձնական ծրագրերի իրականացման, հայկական խաղողի տեսականու դասակարգման նպատակով, տեխնիկական կենտրոնի ստեղծման, ինչպես նաև՝ Հայաստանի ներդրումային և արտահանման ներուժի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հնարավորությունը: Պատվիրակության անդամները տեղեկացրել են, որ Հայաստանում կատարված դիտարկումների արդյունքներն առաջիկայում կամփոփվեն մեկ փաստաթղթի մեջ և կներկայացվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Ֆրանսիացի պատվիրակները նաև վստահեցրել են, որ հանդիպման ընթացքում ներկայացված բոլոր առաջարկները կփոխանցեն իրենց երկրի շահագրգիռ կողմերին՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցառումները հայ-ֆրանսիական գործարար կապերն էլ ավելի ամրապնդելու և ընդլայնելու ուղղությամբ:

ԱՍՈՒԼԻՍ

Արձանագրվել է մթերքների արտադրության աճ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալներ Գրիշա Բաղիյանի և Սամվել Գալստյանի համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում ամփոփվել են բուսաբուծության և անասնապահության ոլորտներում գյուղատնտեսական տարվա արդյունքները: Գրիշա Բաղիյանը նշել է, որ լինելով ՀՀ գյուղատնտեսության առանցքային ճյուղերից մեկը, անասնաբուծությունը 2014 թվականին ապահովել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 39%-ը: «Վերջին տարիներին, անասնաբուծության ոլորտում իրականացված ծրագրերի և հետևողական աշխատանքի շնորհիվ, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության կողմից ամփոփված ցուցանիշների, 2014 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, արձանագրվել է թե՛ անասնապահության և թե՛ կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների աճ», - նշել է նախարարի առաջին տեղակալը:

Մասնավորապես, նրա խոսքով՝ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա համեմատությամբ, տավարի գլխաքանակն ավելացել է 10.9 հազար գլխով և կազմել 688.5 հազար գլուխ, ոչխարների և այծերի գլխաքանակն ավելացել է 28.3 հազար գլխով և կազմել 745.8 հազար գլուխ, խոզերի գլխաքանակն ավելացել է 2.6 հազար գլխով, իսկ թռչունների գլխաքանակն ավելացել է 21.0 հազար գլխով և կազմել 4 մլն 122 հազար գլուխ:

Գրիշա Բաղիյանի խոսքով՝ 2014 թվականին ավելացել են նաև կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալները: Ընդ որում, մսի իրացման ծավալներն ավելացել են 16.5 հազար տոննայով և կազմել 163.3 հազար տոննա, կաթի արտադրության ծավալներն ավելացել են 43.4 հազար տոննայով՝ կազմելով 700.4 հազար տոննա, իսկ ձվի արտադրության ծավալներն ավելացել են 23.1 մլն-ով և կազմել 638.3 մլն հատ:

Անդրադառնալով ձկնաբուծության ոլորտին՝ Գրիշա Բաղիյանը նշել է, որ 2014 թվականին զգալիորեն աճել է ձկան համախառն արտադրությունը՝ կազմելով 13.9 հազար տոննա, ինչը 2.3 հազար տոննայով գերազանցել է 2013 թվականի ցուցանիշը: Ձկան արտադրության ծավալներին զուգընթաց, 2014 թվականին ավելացել են նաև ձկան արտահանումների ծավալները: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ՌԴ է արտահանվել ավելի քան 2.7 հազար տոննա ձուկ, նախորդ տարվա՝ 2.4 հազար տոննայի դիմաց: Բացի այդ, արտահանվել է նաև 6.3 տոննա ձկնկիթ:

Սամվել Գալստյանը իր հերթին նշել է, որ պետական աջակցության շարունակական ծրագրերի շնորհիվ, բուսաբուծության ոլորտում ևս 2014 թվականին գրանցվել է կայուն աճ: «Այդ ծրագրերը նպաստում են հողերի արդյունավետ և նպատակային օգտագործմանը, ցանքատարածությունների և համախառն բերքի ավելացմանը, ապահովում տնտեսական կայուն աճ, հողօգտագործողների եկամուտների ավելացում», - նշել է նա: Սամվել Գալստյանը հատկապես կարևորել է պարարտանյութերի ներկրման ծրագիրը, որի շրջանակում ներկրվում և հողօգտագործողներին մատչելի գներով տրամադրվում են ոչ միայն ազոտական, այլ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր՝ հողերի միակողմանի պարարտացումը կանխելու նպատակով:

Այս տարի ևս, 2 տոկոսով ավելացվել է գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորումը, որի արդյունքում՝ հանրապետության բոլոր համայնքներում գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ունեն վարկեր ձեռք բերել 8 % տոկոսադրույքով: Ս. Գալստյանի խոսքով՝ 2015 թվականին հանրապետությունում նախատեսվում է ավելացնել հացահատիկային և հատիկալընդեղեն մշակաբույսերի, բանջարեղենի, բոստանի, կարտոֆիլի ցանքատարածությունները:

Փոխնախարարը հավելել է, որ գյուղատնտեսական տարին բարենպաստ է, ջրամբարներում կուտակված ջրի պաշարները գերազանցում են նախորդ տարվա մակարդակը, և առկա են լավ նախադրյալներ՝ պտղի, խաղողի կայուն բերք ապահովելու համար, որի ցուցանիշները կգերազանցեն նախորդ տարվա մակարդակը:



**ԱՃԻՍԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ**

**Բանջարեղենի մշակությունն իրականացվում է մեքենայացված եղանակով**

«Այս գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ, այցելել է Բագարան համայնք, որտեղ «Եվրոթերմ» ընկերության կողմից, իրականացվում է նորագույն մեքենայացված տեխնոլոգիաներով բանջարեղենի մշակության ծրագիր: Ընկերությունը 2014 թվականին Բագարանի սահմանային գոտում ձեռք է բերել շուրջ 900 հա տարածք և առաջին փուլում, արդեն իսկ 250 հա տարածքի վրա, սկսել է լուլիկի մշակություն իրականացնել: «Սրանք նոր տեխնոլոգիաներ են մեր հանրապետությունում և, կարելի է ասել, որ բուսաբուծության ոլորտում հեղափոխություն է կատարվում, քանի որ ամբողջ գործընթացը՝ ներառյալ հողի մշակումը, սածիլումն ու բերքահավաքը, առաջին անգամ, իրականացվում է բացառապես մեքենայացված եղանակով՝ ապահովելով բարձր երաշխավորված բերք», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ողջունելով ընկերության նախաձեռնությունը՝ նախարարը հույս է հայտնել, որ հետագա փուլերով ծրագիրն էլ ավելի կընդլայնվի՝ ընդգրկելով առավել մեծ տարածքներ և ապահովելով բարձր բերք՝ միևնույն ժամանակ, շեշտելով մեքենայացված արտադրության այս եղանակը հանրապետության մյուս հողօգտագործողների մոտ տարածելու անհրաժեշտությունը: Նախարարը հայտնել է, որ այս տարի լուլիկի ցանքատարածությունները կազմել են 6515 հեկտար, որից 2250 հեկտարը՝ Արմավիրի մարզում: «Եվրոթերմ» ընկերության նախագահ Էդուարդ Ղազարյանի խոսքով, ընկերության նոր գործարանի կառուցումից հետո 2014 թվականին լուլիկի պահանջարկն աճել է՝ ընդհուպ մինչև 20 հազար տոննա, սակայն լուլիկի սակավության պատճառով, մթերվել է ընդամենը 800-1000 տոննա բերք: Ուստի ընկերությունը, «Այս գյուղատնտեսության նախարարության և Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ, նախաձեռնել է լուլիկի մեքենայացված արտադրության այս ծրագիրը, որի արդյունքում ակնկալվում է ապահովել հեկտարից՝ մոտ 90-100 տոննա բերք:



Նշենք, որ 2014 թվականին հանրապետությունում, ընդհանուր առմամբ, լուլիկի ցանքատարածությունները կազմել են 6515 հեկտար, որից 2250 հեկտարը՝ Արմավիրի մարզում: «Եվրոթերմ» ընկերության նախագահ Էդուարդ Ղազարյանի խոսքով, ընկերության նոր գործարանի կառուցումից հետո 2014 թվականին լուլիկի պահանջարկն աճել է՝ ընդհուպ մինչև 20 հազար տոննա, սակայն լուլիկի սակավության պատճառով, մթերվել է ընդամենը 800-1000 տոննա բերք: Ուստի ընկերությունը, «Այս գյուղատնտեսության նախարարության և Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ, նախաձեռնել է լուլիկի մեքենայացված արտադրության այս ծրագիրը, որի արդյունքում ակնկալվում է ապահովել հեկտարից՝ մոտ 90-100 տոննա բերք:

**ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ**

**Նպաստում ենք մասնագետների կայացմանը**

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, հավատարիմ մնալով բնության պահպանության և անտառների կայուն կառավարման սկզբունքներին, շարունակում է սերտ համագործակցությունը ԳՄՀԸ /GIZ/ ընկերության հետ:

Համագործակցության հերթական ուղղությունը՝ երիտասարդ մասնագետների և ԲՈՒՀ-ի ավարտական կուրսի ուսանողների արտադրական պրակտիկայի անցկացումն է «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ում՝ նպատակ ունենալով նպաստել երիտասարդ սերնդի՝ որպես մասնագետներ կայացմանը:

Վերը նշված ծրագրերի իրականացման նպատակով, օրերս «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ում տեղի ունեցավ եռակողմ հանդիպում՝ կենտրոնի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և ԳՄՀԸ /GIZ/ ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավարների միջև. ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, որն իր մեջ ներառում է մի քանի դրույթներ, այն է՝ աջակցել ավարտական կուրսի ուսանողներին և երիտասարդ մասնագետներին՝ լսարանում իրենց յուրացրած տեսական գիտելիքները գործնա-



տի որպես մրցունակ թեկնածուներ՝ ընդլայնելով Հայաստանի աշխատաշուկայում աշխատանք գտնելու նրանց սահմանափակ հնարավորությունները:

Հանդիպմանը ողջույնի խոսքով հանդես եկավ «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն պր. Ա. Գյուլխասյանը: Նա իր պատրաստակամությունը հայտնեց աջակցել երիտասարդ սերնդի կայացմանն ուղղված նմանատիպ համագործակցությունների և ծրագրերի կազմակերպման հարցում:

ՀԱԱՀ պրոռեկտոր Յու. Մարմարյանն իր շնորհակալություն հայտնեց «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը և ԳՄՀԸ /GIZ/ ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար Աննե Դորիթ Քեմփային, ինչպես նաև՝ գովասանքի ու խրախուսական խոսք հղեց ՀԱԱՀ-ի ուսանողներին, ովքեր իրենց ավարտական պրակտիկան, շնորհիվ սույն համաձայնագրի, անցկացնելու են «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ում: Նա նշել է, որ բուրք պատրաստ է կենտրոնի մասնագետների հետ մանրակրկիտ դիտարկել և քննարկել ուսումնական պլանները, ծրագրերը՝ հաշվի առնելով բոլոր հիմնավորված առաջարկությունները:

Ներկաներին ողջունել է նաև ԳՄՀԸ /GIZ/ ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար Աննե Դորիթ Քեմփայը՝ կարևորելով նմանատիպ պրակտիկաների կազմակերպումն ու ընդլայնումը: Միևնույն ժամանակ նա գոհունակություն է հայտնել «Լավ ու կայուն ապագա ունեցող» ծրագրի մեկնարկի առթիվ, քանզի երիտասարդներն են որոշում երկրի ապագան:

Եզրափակելով հանդիպումը՝ «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն պր. Ա. Գյուլխասյանը կարևորել է այն փաստը, որ յուրաքանչյուրը քաջ գիտակցում է ապագա սերնդի գիտելիքներով հարուստ լինելու կարևորությունը և վստահություն հայտնեց, որ նմանօրինակ ծրագրերի իրականացման արդյունքում, կունենանք որակյալ և մրցունակ մասնագետներ:

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ

**ՈՌՈՂՈՒՄ**

**ՈՌՈՂՈՒՄ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՆԱԽԱԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ**

«Քասախ» ջրօգտագործողների ընկերության տնօրեն Հրահատ Հայրապետյանը ծնվել է Կարբի գյուղում, սովորել է Ավտոճանապարհային տեխնիկումում: Այնուհետև ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը և աշխատանքի անցել Կարբիի սովետական որպես գյուղատնտես, ապա՝ գլխավոր գյուղատնտես: 2003 թ.-ից, հանրապետությունում ՋՕԸ-երի հիմնադրման օրվանից աշխատել է «Քասախ» ՋՕԸ-ի տնօրեն: Արագածոտնի մարզում «Քասախ» ջրօգտագործողների ընկերության կատարած աշխատանքներին ծանոթացրեց Հ. Հայրապետյանը:

- Պարոն Հայրապետյան, Ձեր ղեկավարած ընկերությունը Արագածոտնի մարզի որ համայնքներին է ոռոգման ջուր մատակարարում:

- Մեր տարածաշրջանը նախալեռնային գոտի է, հիմնականում պտղատու այգիներ են: «Քասախ» ՋՕԸ սպասարկում է Արագածոտնի մարզի յոթ համայնքների՝ Կարբի, Օհանավան, Ուշի, Արտաշավան, Սաղմոսավան, Ղազարավանի մի հատված և Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի կեսը (Արզնի-Շամիրամի վերևի հատվածը):

- Այս տարի ջրի մատակարարման աշխատանքները երբ են սկսվել:



- Մարտ ամսից պատրաստ ենք եղել ջրամատակարարման աշխատանքներին, բայց որպես նախալեռնային գոտի, ոռոգումն ավելի ուշ ենք սկսում, այս տարի՝ մայիսի 21-ից: Անցած տարի եղանակը մի քիչ չորային էր, ուստի մայիսի 11-ից սկսեցինք, իսկ Արզնի-Շամիրամի հատվածն ավելի շուտ ենք սկսել ոռոգել:

- Շոգ օրերին ջրի հեղ պակաս խնդիրներ առաջանում են:

- Նախորդ տարի Ապարանի ջրամբարում ջրի մակարդակը քիչ էր, բայց կարողացանք մի կերպ նորմալ ոռոգում ապահովել, ինքնահոս ոռոգման արդյունքում՝ ոչ մի գյուղացիական տնտեսություն չի սրտեղ: Մենք ունենք ներտնտեսային ցանցերի խնդիրներ, և այսօր այդ խնդիրները ներկայացված են: Մեր միջոցներով դրանք վերանորոգում ենք և կարողանում ամենավերջին կետին էլ ոռոգման ջուր հասցնել: Նախորդ տարիներին, «Հազարամյակի Մարտահրավեր» ծրագրով, միջտնտեսային ջրանցք է վերանորոգվել, մեր կառավարության բյուջեի հաշվին ևս երկու ջրանցք է վերանորոգվել: Համաշխարհային բանկի ծրագրով, մեր համայնքների համաֆինանսավորումով ևս 4 կմ ջրագիծ է կառուցվել:

- Ինչպես եք վերահսկում մատակարարված ջրի քանակը և ինչ վիճակում են գտնվում ջրամբարները:

-Մատակարարված ոռոգման ջուրը ջրաչափով ենք չափում: Ինչ վերաբերում է ջրամբարներին, Ափ-նա գյուղի մոտ տարիներ առաջ կառուցված կիսակառույց ջրամբար կա, որի կառուցումն այսօր առաջնահերթ ծրագրերի մեջ չի մտնում, քանի որ ծայրահեղ անհրաժեշտություն չի զգացվում: Ներկայումս պետությունը ջրամբարաշինության լավ քաղաքականություն է տանում: Կարևորները, առաջնահերթության սկզբունքով, կառուցվում են. պատասխանատու, բանիմաց մարդիկ այդ խնդիրներով զբաղվում են, մենք էլ, որքան հնարավոր է, աջակցում ենք, դա մեր պարտականությունն է:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



կանում կիրառելու նպատակով, հնարավորություն ստեղծել ուսումնական պրակտիկան անցկացնել մասնագիտացված կազմակերպություններում, այդ թվում՝ «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ում՝ օգտագործելով աշխարհագրական տեղեկատվական համակարգը /GIS/, խթանել գենդերային հավասարությանը՝ իգական սեռի ներկայացուցիչներին հասանելի դարձնելով բնական պաշարների կառավարման ոլորտում աշխարհագրական տեղեկատվական համակարգի /GIS/ օգտագործման վերաբերյալ ուսումնական վերապատրաստման և զարգացման հնարավորությունները, ինչպես նաև աջակցել ՀԱԱՀ-ին՝ մասնագիտական պատրաստվածության համար ավելի արդյունավետ ծրագրերի մշակման գործում, որն ուսանողներին կնախապատրաս-

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋՆԱԿԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԱԳՐՈՒԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Տավուշի մարզի Գոշ համայնքը, տարբեր առումներով՝ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացրել բոլոր ժամանակներում: Պատմական այս վայրը, որը նաև սրբատեղի է՝ հոգևոր քաղաքակրթության ասպարեզում, գրավիչ է նաև մեզանում արդեն լայն տարածում գտած ագրոէկոտուրիզմի զարգացման առումով:

Գյուղը տեղակայված է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, որը հարուստ է յուրահատուկ բուսական և կենդանական աշխարհով: Այստեղ է գտնվում նաև բնական ճանապարհով գոյացած Գոշ լիճը, որը հարուստ է ձկնատեսակներով: Հանգստի կազմակերպման այս գոտին ուրիշ առավելություններ ևս ունի: Գյուղապետ Գևորգ Ամիրխանյանը հատկապես կարևորեց մաքուր օդի և բնապահպանող մաքուր սննդամթերքի առկայությունը: «Գյուղում գործում են ֆերմերային տնտեսություններ, որոնց արտադրած կաթն ու կաթնամթերքը մեծ պահանջարկ են վայելում: Հովիվները հաճույքով են օգտվում նաև բուսական ծագման սննդամթերքից: Առավելություններից մեկն էլ այն է, որ մեր գյուղում արտադրվում է միայն օրգանիկ սննդամթերք: Բնակիչները թուխաբլիտներ և, նույնիսկ, պարարտանյութ չեն օգտագործում», - ասում է գյուղապետը:

Գյուղում տարեցտարի զարգանում է անասնաբուծությունը: Հատկապես՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տոհմային անասնաբուծության ուղղությանը: Այդ նպատակով, «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի աջակցությամբ, ստեղծվել է 6 անդամներից բաղկացած կոոպերատիվ տնտեսություն: Ժամանակակից ֆերմայում բուծ-

ռանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերում նաև բնակիչների կողմից անտառից բերված վայրի հատապտուղների նկատմամբ: Ի դեպ, Իջևանի գիևու գործարանը, նույնիսկ, կատարել է մթերումներ: Բնակիչները զբաղվում են նաև բուսական թելերի ու համեմունքների հավաքմամբ: «Գյուղի 1150 բնակիչներից ընդամենը 5 %-ն է մեկնում արտագնա աշխատանքի, այն էլ՝ ժամանակավոր: Մեկնածները



հետ են վերադառնում, քանի որ այստեղ ևս անելիքները քիչ չեն: Ագրոէկոտուրիզմի զարգացումը նույնպես մարդկային ռեսուրսներ է պահանջում», - նշում է Գևորգ Ամիրխանյանը: Ի դեպ, գյուղական զբոսաշրջության գործընթացին ծանոթանալու նպատակով, մասնագետներ են գործուղվել արտասահմանյան երկրներ՝ ուսումնասիրելու արտերկրի փորձը: «Գյուղում, Գոշավանքի հարևանությամբ, արդեն գործում է ժամանակակից 3 հյուրատուն և 1 հյուրանոց: Հյուրերն այնտեղ կարող են ճաշակել նաև ազգային, ավանդական ուտեստներ ու խորտիկներ, որոնք պատրաստված են հատուկ տեխնոլո-



վում են 14 գլուխ ներկրված բարձրարժեք հորթեր, որոնք հետագայում, ըստ տոհմային հատկանիշների, կցուցաբերեն բարձր մթերատվություն: Գյուղացիական տնտեսություններում խնամվող խոշոր եղջերավոր կենդանիների թիվը հասնում է 500-ի: Գյուղում սկսել են զբաղվել նաև ոչխարաբուծությամբ, զարգացած է մեղվաբուծությունը: Ինչ վերաբերում է բուսաբուծությանը, ապա, գյուղապետի տեղեկացմամբ, այստեղ աճում են ավանդական գրեթե բոլոր բուսատեսակները՝ կարտոֆիլ, լոլիկ, վարունգ և այլն:

Պտղաբուծության ոլորտում նույնպես առաջընթաց է արձանագրվել, վերջին տարիներին ավելացել է տանձենի և խնձորենի ծառատեսակների թվաքանակը: Գոշը հարուստ է նաև ընկուզենիներով: Զբոսաշրջիկներն ա-

գիաներով: Արվում է հնարավորը, որպեսզի հյուրերը լավ տպավորությամբ հեռանան մեր գյուղից՝ կրկին վերադառնալու ակնկալիքով», - հավելում է գյուղապետը:

Նշենք նաև, որ Գոշավանքն ընդգրկված է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության» պատմական հետաքրքրություն ներկայացնող հուշարձանների ցանկում և մշտապես ներառվում է այցելությունների շրջանակում: Ծրագրով նախատեսվում է քայլարշավ կազմակերպել Սեմյոնովկա գյուղից դեպի Պարզ լիճ, այնուհետև՝ Գոշավանք:

Գյուղատնտեսական լավագույն ծրագրերից մեկն էլ՝ Օբսֆամի հայաստանյան գրասենյակի կողմից ժամանակակից շերմատան կառուցումն է, որտեղ արդեն աճեցվել են բանջարեղենի առաջին սածիլները:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզի Թթուջուր համայնքի հողատարածքներ, երկու տասնամյակից ավելի չեն մշակվել: Պատճառը՝ ըստ գյուղապետ Վիգեն Սահակյանի, հողի մշակության համար անհրաժեշտ տեխնիկայի բացակայությունն էր: Բացի այդ, սոցիալապես անապահով վիճակում գտնվող գյուղացիներն ի վիճակի չէին սպասարկման ծառայությունների դիմաց վճարումներ կատարել: Այսօր պատկերն այլ է:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «ԳԾԻԳ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի մուտք գործելուց հետո, հողի մշակը, որը երկար տարիներ գրեթե անգործության էր մատնվել, կրկին «վերադարձավ» հողագործությանը: Արդեն ամրացած, քարքարոտ ու ճաքճաք հողն էլ երկար էր սպասել տիրոջը: «Տնական անձրևները երկար ժամանակ խոչընդոտում էին հողի մշակության, հատկապես՝ վարի աշխատանքների կատարմանը: Սակայն, հաղթահարելով բոլոր դժվարությունները, արդեն հասցրել ենք վարել 40 հա հողատարածք: Ընդհանուր առմամբ, այս տարի նախատեսել ենք վարել 100 հա հողատարածք, որից՝ 40 հա-ի վրա կկատարվի գարնանացան, մնացածը՝ աշնանացան», - ասում է գյուղապետ Վիգեն Սահակյանը: Ծրագրի շրջանակներում ներկրվել է «Բելառուս» մակնիշի 2 տրակտոր, 2 հակավորող սարք, տրակտորի 1-ական հնձիչ և հավաքիչ, ձեռքի 4 հնձիչներ: Ի դեպ, ձեռքի հնձիչների թվաքանակն ավելացվելու է, քանի որ գյուղամերձ նախկին խոտհարքներն արդեն ցանքի տակ են դրվելու, իսկ խոտը բերվելու է հեռագնա արտադարներից: Գյուղապետի տեղեկացմամբ, արդեն ջրարբիացվել են արտադարները, տեղադրվել են խմուցներ: Իսկ

մար: «Կարտոֆիլաբուծության անհրաժեշտ տեխնիկայի ձեռք բերումից հետո, զանգվածային հողատարածքներ կորվեն ցանքի տակ: Այդպիսով, կվերականգնվի ճամբարակի տարածաշրջանում լայն տարածում ունեցող այդ ճյուղը, որը երկար տարիներ եկամտի մշտական աղբյուր է հանդիսացել գյուղացու համար», - հավելում է գյուղապետը: Ինչ վերաբերում է «Արտադարների բարելավման ծրագրին» ապա, վերջինիս շրջանակներում, գյուղում ստեղծվել է «Թթուջուր արտոօգտագործողների սպառողական կոոպերատիվը»,



որում ընդգրկվել է գյուղի բնակչության 90%-ը: «Գյուղացին գոհ է աշխատանքի կազմակերպման այս եղանակից, քանի որ խոտհունձը կատարել է շուկայական մատչելի գներով: Այդպիսով, առաջին անգամ, անասնակերի կուտակման հետ կապված խնդիրներ չեն առաջացել: Նույնիսկ հարևան գյուղերն են օգտվում մեր գյուղտեխնիկայի ծառայություններից: Ի դեպ, «Շեն» բարեգործական հիմնադրամը տեխնիկական նույնպես հատկացրել է կոոպերատիվին: Դա նշանակում է, որ կոոպերատիվը, և ընդհանրապես, համագործակցված աշխատանքի այս եղանակը, վստահություն է ներշնչում: Եթե չլիներ կոո-



առաջիկայում, «Շեն» բարեգործական հիմնադրամի միջոցներով, գյուղատնտեսական կենդանիների համար կկառուցվեն կացարաններ, կբարելավվեն սարամասեր տանող ճանապարհները, ինչպես նաև կտրամադրվեն կթի ավտոմատ սարքավորումներ: Ի դեպ, «Շեն»-ի աջակցությամբ, համարվել է նաև գյուղատնտեսական տեխնիկան, ձեռք բերվել շարքացան, կուլտիվատոր, «Բելառուս» մակնիշի տրակտորի գուրթան և այլն:

Ընթացիկ տարում կկատարվի հացահատիկային մշակաբույսերի ցանք, իսկ 2016թ.-ին նախատեսվել են ցանել նաև կարտոֆիլ: Տարածաշրջանին բնորոշ է կարտոֆիլաբուծությունը, քանի որ բնակիչմայական պայմանները նպաստավոր են այդ մշակաբույսի աճեցման և բարձր բերք ստանալու հա-

պերատիվը, չէր լինի նաև գյուղատնտեսական տեխնիկան», - իր խոսքը եզրափակում է Վիգեն Սահակյանը:

Աշխատանքների ընթացքին մշտապես հետևում է «ԳԾԻԳ»-ի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բաղայանը, որի մոտ, գյուղ կատարած այցի ընթացքում, մշտապես նոր մտահաղացումներ են ծնվում և վերածվելով ծրագրի՝ կյանքի են կոչվում:

Նախատեսվել են գյուղտեխնիկայի համար կառուցել կայանատեղ, որի իրականացմանը կաջակցի «Շեն» բարեգործական հիմնադրամը: Ավելավում է, որ աջակցության այս ծրագրերը կնպաստեն նաև գյուղում անասնաբուծության, այդպիսով նաև՝ գյուղացու եկամուտների ավելացմանը:

Էջի կոլոթերը Նելի Սահակյան

ԺՄՄԱՆԱԿԻՆ ԸՆԴՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԸՆԴՈՒՄ

Մեր գյուղատնտեսության դեռևս լիովին կայացած չլինելու մասին խոսում է նաև այն փաստը, որ շուտով արդեն քառորդ դար կլինի, ինչ ապահովագրության մասին խոսվում է. բոլոր համակարգերում հասկանում են դրա հոյժ անհրաժեշտ լինելը, բայց գործնական համակարգ ստեղծելու դեռ առաջին քայլերն էլ արված չեն, եթե չհաշվենք սրանից մոտ երկու տասնամյակ առաջ իրականացված պիլոտային ապահովագրական ծրագիրը, որի արդյունքում՝ բոլոր ապահովագրված տնտեսությունները ենթարկվեցին ուժեղ կարկտահարման և լիարժեք հատուցում ստացան:

Ինչ խոսք, այդ կարևորագույն միջոցի կիրառման ուշացումն ունի ծանրակշիռ օբյեկտիվ պատճառներ. նախ՝ խնդիրը բարդ է և բազմակողմանի, ինչպես գյուղատնտեսությունում ցանկացած մասշտաբային խնդիր: Թերևս, նաև այդ պատճառով է, որ մինչև հիմա չի ներկայացվել քննարկման «Գյուղատնտեսական ապահովագրության մասին» օրենքը, որի առկայությունը, թեպետ, ինքնին համակարգի ստեղծման երաշխիք չի կարող լինել, բայց որի անհրաժեշտությունն, այնուամենայնիվ, պարտադիր է: Օրենքի հաջողված լինելու դեպքում, գործընթացի մեջ ակտիվորեն կներգրավվեն բոլոր մասնակից կողմերը՝ սիներգիկ փոխազդեցությամբ, որն էապես կնպաստի համակարգի ամբողջացմանն ու հզորացմանը, կնպաստի կարևոր հարակից խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ կոոպերացման՝ առավել բարձր մակարդակի փոխհատուցում ստանալու մեխանիզմի միջոցով:

Օրինակ՝ Ճապոնիայում 8 հեկտարից ավելի զբաղեցնող հացահատիկի տարածքները պարտադիր պետք է ապահովագրվեն: Մեզանում դրան կարող ենք ավելացնել՝ առավել մեծ տարածությունների դեպքում, խրախուսական մեխանիզմների կիրառումը, որը կամավոր կոոպերացման համար նախադրյալներ կստեղծի: Այն օգուտ է ոչ միայն գյուղացուն ու պետությանը, այլ նաև ապահովագրող ընկերությանը, քանի որ այն էապես պակաս թվով սուբեկտների հետ է գործ ունենալու:

Դժվարը սկիզբն է. այդպիսի կոոպերատիվներն արդեն ավելի հեշտ կարող են ստեղծել ասոցիացիաներ և, հանրապետության մասշտաբներով, ճյուղային միություններ, որոնք ամենուր պաշտպանելու են իր անդամների շահերը և լուծելու նրանց առջև ծառայած խնդիրները: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում արդեն 2 տարի է, ինչ նման կառույցները, պետության հետ միասին, հացահատիկ

մշակողներին հնարավորություն են տալիս իրենց բերքն անվճար պահեստավորելու մինչև գարուն՝ առանձին-առանձին կամ միասին՝ դաշնությունում կամ արտերկրում հարմար գնորդ գտնելու համար: Նման գնորդի չգտնվելու դեպքում, պետությունը երաշխավորված գնով գնում է բերքը: Մեր հանրապետությունում ևս, նման քայլի կիրառումը կլուծեր մի վաղուց հասունա-



ցած խնդիր. հանրապետությունում հացահատիկ արտադրողն այլևս ստիպված չի լինի բերքը բունկերից կես գնով վաճառել:

Ճապոնիան ևս մի հետաքրքիր ապահովագրական մեխանիզմ է կիրառում՝ կազմակերպելով շահույթ չհետապնդող փոխադարձ ապահովագրական ընկերությունների ցանց: Բոլոր ապահովագրվողների համատեղ պայմանավորվածությամբ, նրանց ստացած հատուցման գումարներից համամասնորեն մի ոչ մեծ բաժին է առանձնացվում, որը, հատուկ դեպքերում, փոխօգնության կարգով, գործի է դրվում:

ՌԴ-ի ապահովագրական համակարգն արդեն շուրջ 10 տարվա պատմություն ունի, որից նույնպես շատ բան կարելի է ընդօրինակել: Մասնավորապես, այն այժմ իր զարգացման դժվար փուլերից մեկն է ապրում, երբ գյուղացուն դեռ չեն կարողանում շահագրգռել, նույնիսկ, դիսկերի նվազեցման նպատակով, վճարում կատարել, որի արդյունքում՝ վնաս կրելու դեպքում հատուցումը՝ միայն պետության կողմից ապահովագրական մուծում կատարելու համեմատությամբ, կլինի բազմապատիկ:

Ուսանելի կարող է լինել նաև այլ երկրների փորձը: Իսպանիայում, օրինակ, դիսկերի նվազեցման գործառույթներում, շատ լավ է համակարգվում մասնավոր սեկտորի և պետական կառույցների միջև աշխատանքի բաժանումը: Շուրջ 60 մասնավոր առևտրային ընկերություններ ապահովագրական պայմանագրեր են կնքում գյուղմթերք արտադրողների հետ: Պետությունը, հատուկ դրա համար ստեղծած ձեռնարկության մի-

ջոցով, վերահսկում և զարգացման նախադրյալներ է ստեղծում դրանց համար. համակարգում է ապահովագրության մակարդակներն ու փոխհատուցման չափերը, ագրոտեխնիկական կամ այլ տեխնոլոգիական պարտադիր նվազագույն ստանդարտները և այլն: Պետությունն՝ ի դեմս էկոնոմիկայի նախարարության, նաև ապահովագրում է այդ 60 ընկերություններին՝ իրականաց-

ապահովագրող ընկերությունը դրանում ոչ մի շահագրգռվածություն չունի: Դրա համար, նախևառաջ, պետությունը՝ ի դեմս գյուղատնտեսության նախարարության, պետք է կազմի բոլոր տարածքների համար (և բոլոր այն հողվածներով, որ կհետաքրքրեն այս կամ այն տնտեսությանը. կենդանի, տեխնիկա, շինություններ, և այդ բոլորը՝ ըստ դիսկերի տեսակների) կրած վնասների վիճակագրական քարտեզ և որոշի դիսկի միջին թվաբանական մեծությունը: Արդյունքում՝ արդեն կներգրավվեն ապահովագրական ընկերությունները, որոնք կառաջարկեն ապահովագրության պայմաններ: Իսկ պետությունը, գնահա-

տելով իր հնարավորությունները, կառաջարկի իր վճարվելիք բաժնեմասի չափը՝ միաժամանակ ուրվագծելով գյուղացու կողմից վճարելիքի սահմանները՝ հատուցման տարբեր մակարդակների համար: Ապա կայացվելու է եռակողմ համաձայնություն՝ պետության, գյուղացու և ընկերության միջև, որը սկիզբ կդնի ապահովագրական գործընթացի գործնական ծավալմանը, իհարկե, սկզբում՝ պիլոտային ծրագրերի ձևաչափով, որոնց հաջողությունն էլ կորոշի հետագա զարգացումների ընթացքը հանրապետության մասշտաբով:

Վ Հ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԿԱՊՈՂ ՕՂԱԿ

Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD)՝ «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի երկրորդ փուլը նպատակաուղղված է աշակցություն ցուցաբերելու Մեղրիի տարածաշրջանի փոքրածավալ պտղաբույսների, վերամշակողների և առևտրային կազմակերպությունների արտադրողականության և եկամտաբերության բարձրացմանը:

Ուսումնասիրություններն ու ծրագրի իրականացման ընթացքը ցույց են տվել, որ այս տարածաշրջանում զգացվում է բարձրորակ մասնագետների կարիք՝ հատկապես այգեգործության բնագավառում: Ուստի, ծրագրի պատասխանատուներն ու համակարգողները նպատակահարմար են գտել Մեղրիի տարածաշրջանում հիմնել ՀԱԱՀ-ի ենթակայության տակ գործող ագրոնոմիական ուղղվածության որևէ ուսումնական կառույց (ամենայն հավանականությամբ՝ վարժարան կամ քոլեջ), որը յուրահատուկ կապող օղակ կլինի դպրոցն



ավարտողների և համալսարանի միջև: Ծրագիրը դեռևս ուսումնասիրման, հետազոտական փուլում է, որին կհաջորդեն երկուստեք քննարկումները, կլինեն առաջարկություններ, ապա՝ այն կիրառործվի: Հետազոտությունն ու ուսումնասիրությունը նպատակ ունեն կներկայացնել Մեղրիի տարածաշրջանի մի քանի դպրոցների տնօրենների և աշակերտների՝ մայիսին համալսարան կատարած այցն ու Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Գագիկ Սանթրոսյանի հետ ունեցած նրանց հանդիպումը: Հյուրերը շրջայց կատարեցին համալսարանի տարբեր բաժիններում՝ թանգարան, գրադարան, ՏՏ և ԻԾ կենտրոն, ագրոնոմիական ֆակուլտետի ամբիոններ: Առաջիկայում նախատեսվում է ագրոնոմիական ֆակուլտետի մասնագետների այցը Մեղրի՝ տեղում ուսումնասիրելու տարածաշրջանի՝ ագրոնոմիական ուղղվածության կրթարան բացելու հնարավորությունները:

Ծրագիրը բավականին խոստումնալից է Մեղրիի տարածաշրջանում գյուղատնտեսության հետագա զարգացման և ագրոբիզնեսի կայացման առումով: Կարծում ենք, ՀԱԱՀ ագրարային ֆակուլտետի գիտական ներուժն ամեն ինչ կանի՝ մեր մասնագետների կարիքն ունեցող տարածաշրջանին օգնելու և անհրաժեշտ կարգերով ապահովելու համար:

ՀԱՅՈՂՎԱՏ ՓՈՐՁ

ԱՌՈՂՋ ՄՆՈՒՆԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Սա Սիմոն Զամալյանի համար ոչ միայն նշանաբան է, այլև՝ նպատակ: Նա ապրում է Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում: Մարզում ոչ միայն հաջողակ և գրագետ գյուղատնտեսի, այլև որակյալ սածիլներ արտադրողի համբավ ունի: Սիմոն Զամալյանն ամեն ինչ անում է՝ էկոլոգիապես մաքուր բանջարեղեն արտադրելու համար: Մշակում է նաև՝ բրյուսեյան կաղամբի, բրոկոլիի, նեխուրի արմատային և կոթունային տեսակներ, ռեհանի նոր սորտեր: Վերը նշված բանջարեղենները ոչ միայն համեղ են, այլև շատ օգտակար ու արժեքավոր դեղաբույսերի համբավ ունեն:

«Այսօր առողջ և որակյալ բերք ստանալու համար բավականին արգելքներ կան՝ սերմերից սկսած, պարարտանյութերից ու թունաքիմիկատներից վերջացրած», - ասում է նա: «Ոչ միայն սերմի որակն է կարևոր, այլև՝ հետագայում ագրոտեխնիկական մշակության ճիշտ կիրառումը»: Ձեռք բերածով և եղած գիտելիքներով բավարարվելը սխալ համարելով, Ս. Զամալյանը նշում է, որ ամեն տարի մասնակցում է գյուղատնտեսության մեջ կիրառվող նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տարբեր սեմինարների և ցուցահանդեսների, որտեղ ցուցադրվող բարձր բերքատու սերմերը նախապես փորձարկում է, այնուհետև վաճառում ցանկացողներին: Որպես ապացույց՝ նշում է, որ կան սորտեր, որ փորձարկել է տասը տարի առաջ, և մինչև հիմա տեղացի ֆերմերների մոտ դրանք մեծ պահանջարկ ունեն: Բայց նաև եղել են սորտեր, որոնց մշակությունը սպասված արդյունքը չի տվել, նման ընկերությունների հետ աշխատում է համագործակցությունը չշարունակել:

Այս տարի փորձարկում է վարունգի՝ 3 և լոլիկի՝ 4 սորտերի սերմեր՝ ջերմոցային և բաց գրունտի պայմաններում աճեցնելու համար: Ամեն տարի սերմաբուծության մեջ նորություններ են լինում, բայց մինչև չփորձարկի, սածիլները չի վաճառի սպառողին: Ոչ միայն բարձրորակ սերմերն են առաջնային, այլև՝ թունաքիմիկատների ժամանակին ու ճիշտ կիրառումը: Ֆերմերը կարծում է, որ առաջնային և կարևոր խնդիր է ֆերմերի համար գրագետ և բանիմաց լինելը: Գիտելիքների պակասը շատ է խանգարում ֆերմերներին: «Տարբեր բուժանյութեր կան, պետք է ճիշտ ընտրություն կատարել, ագրոտեխնիկական ճիշտ մշակության դեպքում, ծախսը քիչ կլինի, օգուտը՝ շատ»: Նա նաև չի զլանում համագյուղացիներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել՝ բանջարանոցային մշակաբույսերի համար ճիշտ սերմեր և թունաքիմիկատներ ընտրելու համար: Ֆերմերների վստահությունն է, որ ցանկություն է առաջացնում ավելացնել սածիլների արտադրության համար նոր տարածքների տրամադրումը:



Այժմ Զամալյանների տնտեսությունում 1,5 հա տարածքի վրա առվույտ, 1 հա տարածքի վրա մշակվում է սերմնարտադրության համար՝ ռեհան, իսկ ջերմոցային տնտեսությունում, մշակվում են լոլիկի, վարունգի և տաքդեղի նոր սորտեր:

Գյուղատնտեսության ոլորտում ֆերմերն իր հաջողության գաղտնիքը ոչ միայն աշխատասիրությունն է համարում, այլև եղանակային պայմաններին հարմար ճիշտ մշակաբույսեր ընտրելը: «Ես տարեկան 3-4 բերք եմ ստանում՝ առանց ջեռուցման: Ձմռանը ընտրում եմ այնպիսի սորտեր, որոնք պահանջարկ ունեն և ցրտադիմացկուն են. աճեցնում եմ կանաչեղեն, ամսաբողկ, որոնք ջեռուցման կարիք այդքան էլ չունեն»: Ըստ ֆերմերի՝ այսօր ժողովրդին պետք է առողջ սնունդ և մրցունակ միջազգային շուկա: Իսկ այդ ամենն ունենալու համար միայն աշխատասեր լինելը քիչ է, անհրաժեշտ է նաև կրթված և տեղեկացված լինելը:

Սիմոն Զամալյանը նշում է, որ համագործակցում է նաև Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի հետ: Նրա տնտեսությունը ԳԱՄԿ-ի փորձացուցադրական տնտեսություններից լավագույններից մեկն է: Կենտրոնի հետ համատեղ, նոր տեխնոլոգիաներով լոլիկի տեղական 6 սորտեր են փորձարկել՝ բացօթյա պայմաններում՝ 1000 մետրից ստանալով 18 տոննա բերք: Նրա տնտեսությունում փորձարկված և բարձր արդյունքներ ապահոված մշակաբույսերի սերմերն ու սածիլները, ԳԱՄԿ-ի աջակցությամբ, տարածվում և ներդրվում են տասնյակ գյուղացիական տնտեսություններում:

2006 թվականին «Հագարամյակի մարտահրավերներ հիմնադրամի» միջոցներով, կառուցվել է ջերմատուն՝ լոլիկի և վարունգի տարբեր սորտերի սածիլներ մշակելու համար: Ջերմատունը գործունեության ընթացքում, համարվել է հանրապետությունում լավագույն կենտրոն, որտեղ անցկացվել են բազմաթիվ սեմինարներ և դասընթացներ:

Սահականուշ Արդյան  
Արմավիրի ԳԱՄԿ

ԴԻՄԱՆԿԱՐ

ՓՈՐՁՈՒՄ ԵՄ ԼԻՆԵԼ ՀԱՋՈՂԱԿ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՖԵՐՄԵՐ

Նորավան համայնքը գտնվում է Սյունիքի մարզում՝ Սիսիան քաղաքից 12 կմ հեռավորության վրա: Ներկայումս համայնքն ունի 109 ծուխ և 360-ից ավելի բնակչություն: Մեծ մասն անասնապահությամբ է զբաղվում: Համայնքում մեկ ծխին՝ միջինը բաժին է ընկնում 3 կով: Այստեղ ապրում և իր տնտեսությունն է զարգացնում Նյուրա Բարխուդարյանը: Նրա թեկնածությունը «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» մրցանակաբաշխությանը ներկայացրել էր «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ն, որն իրականացնում է «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագիրը՝ Շվեյցարիայի Համադաշնության զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ:

Նյուրա Բարխուդարյանի ընտանիքը փոքր է, բաղկացած է երեք անդամից՝ Նյուրան, քույրը և մայրը: Մասնագիտությամբ հաշվապահ-տնտեսագետ է, աշխատանքային գործունեությունը սկսել է Սիսիանի տրիկոտաժի ֆաբրիկայում, այնուհետև 16 տարի աշխատել է Սիսիանի պանրի գործարանում՝ որպես քիմի-

եմ՝ կմեծացնեմ նաև դրա ծավալները, նախ՝ հեշտ է զբաղվել, բացի այդ, նաև եկամտաբեր է», - պատմում է նա: Դրանից գատ, կին ֆերմերը զբաղվում է նաև հողագործությամբ, մշակում է կենդանիների համար կերային մշակաբույսեր: «Անասնաբուծությունից բացի, տանս կից ծաղկանոց ունեմ, որտեղ ծաղիկներ եմ աճեցնում և զբաղվում դրանց վաճառքով: Աշխատում եմ տարբերակել արտադրանքս և մեղմել սեզոնայնության խնդիրը: Հիմնական եկամուտս գոյանում է կաթնամթերքի (չորաթան, պանիր, մածուկ), ձվի, գառան և տավարի մսի արտադրությունից, այս տարի նաև քիչ քանակությամբ մեղր կվաճառեմ», - ավելացնում է նա:



Նյուրա Բարխուդարյանը մասնակցել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից Սյունիքում իրականացվող «Կանանց գլխավորությամբ ընտանիքների ֆերմերային տնտեսությունների կարողությունների և հմտությունների զարգացում» ենթաֆորմի, որի աջակցությամբ կարողացել է ավելացնել թռչունների քանակն ու անասնակերի արտադրության ծավալները, ինչպես նաև նախաձեռնել բարձրարժեք կերային մշակաբույսերի փորձնական մշակությունը:

Նյուրան ֆերմերային տնտեսությամբ զբաղվում է 1990-ական թվականներից: «Նախկինում ունեցել եմ մոտ 25 մանր և 4 խոշոր եղջերավոր անասուն: Աշխատուժի, մասնավորապես՝ ֆիզիկական ուժի պակասը ստիպեց ինձ թռչնաբուծությամբ զբաղվել: Ընտանիքում չկար տղամարդ, ով կկարողանար զբաղվել կենդանիների խնամքով և խոշոր եղջերավորի բուժմամբ», - ասում է նա և պատմում, թե ինչպես պահպանելով հիմնական անասնազխաբանակը, սկսեց զուգահեռ զարգացնել և ընդլայնել թռչնաբուծության ոլորտը: «Թռչունների քանակը հասցրեցինք 76-ի, սակայն, թռչնի ժանտախտի պատճառով, կորցրեցինք թռչունների մոտ 70 տոկոսը: Այնուամենայնիվ, ջանք չեմ խնայել այդ կորուստը վերականգնելու համար: Ինձ այդ հարցում օգնել է ընտանիքս», - ասում է նա:

Այժմ Նյուրա Բարխուդարյանն ունի 55 թև թռչուն: Ստացված արտադրանքը՝ հավկիթը, վաճառում է համայնքի բնակիչներին և, ընդլայնելով շուկան, արդեն մատակարարում է նաև Սիսիան քաղաքի խանութներին և անհատներին:

«2013 թ.-ի ամռանից սկսել եմ զբաղվել մեղվաբուծությամբ, ձեռք եմ բերել 4 մեղվափեթակ: Կարծում

եմ՝ կմեծացնեմ նաև դրա ծավալները, նախ՝ հեշտ է զբաղվել, բացի այդ, նաև եկամտաբեր է», - պատմում է նա: Դրանից գատ, կին ֆերմերը զբաղվում է նաև հողագործությամբ, մշակում է կենդանիների համար կերային մշակաբույսեր: «Անասնաբուծությունից բացի, տանս կից ծաղկանոց ունեմ, որտեղ ծաղիկներ եմ աճեցնում և զբաղվում դրանց վաճառքով: Աշխատում եմ տարբերակել արտադրանքս և մեղմել սեզոնայնության խնդիրը: Հիմնական եկամուտս գոյանում է կաթնամթերքի (չորաթան, պանիր, մածուկ), ձվի, գառան և տավարի մսի արտադրությունից, այս տարի նաև քիչ քանակությամբ մեղր կվաճառեմ», - ավելացնում է նա:

Նյուրա Բարխուդարյանը մասնակցել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից Սյունիքում իրականացվող «Կանանց գլխավորությամբ ընտանիքների ֆերմերային տնտեսությունների կարողությունների և հմտությունների զարգացում» ենթաֆորմի, որի աջակցությամբ կարողացել է ավելացնել թռչունների քանակն ու անասնակերի արտադրության ծավալները, ինչպես նաև նախաձեռնել բարձրարժեք կերային մշակաբույսերի փորձնական մշակությունը:

«Ներկա պայմաններում շատ դժվար է որևէ բնագավառում հաջողության հասնել, բազում խոչընդոտներ պետք է հաղթահարես: Ձանք ու եռանդ չեմ խնայում հմտություններս ու փորձս կատարելագործելու համար: Նոր ուղիներ եմ փնտրում՝ տնտեսությունս ընդլայնելու և զարգացնելու համար: Փորձում եմ լինել հաջողակ ու նախաձեռնող ֆերմեր և իմ թեկուզև փոքրիկ լուրման ներդրել համայնքի զարգացմանը նպաստելու համար», - հպարտությամբ նշում է կին ֆերմերը:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ



